Ու արծիվը նստեց եռագույնի վրա...

Ինը տարի առաջ կազմավորվեց ՆԳՆ Հատուկ գունդը

1990 թվական: Ինչպես նախկին Խորհրդային Միությունում, Հայաստանում նույնպես խառը իրավիճակ էր, անիշխանություն, սպասումի օրեր: Ամենուրեք վխտում էին դիպուկ անվանումով՝ «ասֆալտի ֆիդայիները»: Առիթն օգտագործելով, նրանք դարձել էին դրության տերը, իրենց անօրինական գործողություններով խախտելով մարդկանց անդորրը, սփվեր էին գցում հանուն հայրենիքի ազատության ու անկախության ուղի ելած նվիրյալների անվան վրա: Կտրուկ գործողություններ էին անհրաժեշտ թե արտաքին թշնամու ոտնձգություններից երկիրը փրկելու, եւ թե սեփական տանը կարգուկանոն հաստատելու համար:

Ահա, 1990թ. աշնանը << Գերագույն խորհրդի պաշտպանության եւ ներքին գործերի հանձնաժողովի նորընտիր նախագահ Վազգեն Սարգսյանն իր մոտ հրավիրեց մարտական ընկերներից մի քանիսին եւ հանձնարարեց նրանց ղեկավարած կամավորական ջոկատները միավորել մեկ ընդհանուր կառույցի մեջ: Քանի որ Հայաստանը դեռեւս անկախ չէր եւ սեփական բանակ ունենալ չէր կարող, ստեղծվելիք գունդը յեւականորեն մտնելու էր ՆԳՆ համակարգի մեջ:

Եւ ահա, 1990 թվականի սեպտեմբերի 20-ին Զարբախի հավաքակայանում կամավորական ավելի քան 20 ջոկատների միավորմամբ ստեղծվեց << ՆԳՆ-ին կից Հատուկ գունդը՝ Ս. Առաքելյանի հրամանատարությամբ, որը, փաստորեն, դարձավ Հայաստանի ապագա կանոնավոր բանակի կորիզը:

Երբ կամավորական ջոկատների մեջ տարածվեց Հատուկ գունդ ստեղծելու լուրը, անդամագրվելու համար ստացվեց ավելի քան 8 հազար դիմում: Դիմումներին ընթացք տալու, ամենից արժանավորներին ընտրելու համար ստեղծվեց մանդատային հանձնաժողով՝ Սենիկ Պողոսյանի (Քեռի) գլխավորությամբ: Ընտրությունը շատ խիստ էր. բոլոր նրանք, ովքեր գեթ մեկ անգամ արատավորել էին ֆիդայու անունը, որքան էլ փորձեցին այլեւայլ ճանապարհներով խցկվել գնդի կազմ, հաջողություն չունեցան: Չէին անցնում նույնիսկ խորհրդային բանակում որպես ոչ շարայիններ ծառայածները, ֆիզիկապես թույլերն ու հիվանդները: Պատահական չէ, որ խստագույն այդ հանձնաժողովի մաղով անցան դիմում տվողների մեկ քառորդից էլ պակաս ազատամարտիկներ՝ լավագույններից լավագույնները: Եկավ գնդի մարտական դրոշն ունենալու օրը: Խորհրդային ՊԱԿ-ը խանութներից հավաքել էր տվել նարնջագույն կտորները՝ եռագույն դրոշներ կարելու հանրապետությունում ծայր առած անկասելի շարժումը գոնե փոքրիշատե մեղմելու համար:

–Ոչ մի կտոր էլ ման մի եկեք,–ընկերների փնտրտուքներին վերջ տալու համար ասաց Քեռին,–դրոշ ես ունեմ, ճիշտ է՝ նարնջագույնն այնքան էլ նարնջագույն չէ, դեղին է, բայց կարեւորն այն է, որ դրոշն օրհնվել է մեծն Անդրանիկի՝ Ուջանում դրված արյանի մոտ. օրհնողի էլ ուջանցիների բերած արծիվն էր, որը կամքն յուր նստեց դրոշի վրա՝ կարծես հաստատելու մեր ուժը, համառությունն ու հաստատակամությունը:

Ու Քեռին իրեն հատուկ հարուստ բառուբանով պատմեց, թե ինչպես ինքը մեկ տարի առաջ կարբեցիների գլուխն անցած, իր գործած դրոշը բռնած ոտքով Ուջան է հասել, միտինգ արել Անդրանիկի արյանի մոտ եւ հատուկ այդ օրվա համար թոցնելու պատրաստ արծիվներից մեկը եկել–նստել է եռագույնի վրա...

Առաջարկն անցավ միաձայն: Դրոշի վրա գրվեց «Հայաստանի Հանրապետություն, Հատուկ գունդ» եւ դարձավ գնդի մարտական դրոշը, որը բազում թոհուբոհերի միջով անցնելուց հետո այսօր վերջնականապես հանգրվանել է գնդի շտաբում:

Ու ահա, հավաքվել են նրանք՝ գնդի օրորոցի մոտ կանգնած հայ քաջորդիները՝ նշելու Հատուկ գնդի հիմնադրման տարելիցը: Հավաքվել են << ՊՆ «Մայր Հայաստան» զինվորական թանգարանում, որտեղ սուրբ մասունքներ են պահվում ու ցուցադրվում ինչպես այս գնդի լուսավոր փղաներից, այնպես էլ հայոց ազատամարտերի հին ու նոր մյուս նվիրյալներից:

Տանտիրոջ՝ թանգարանի պետ Ն. Սարգսյանի բարեմաղթանքի խոսքերից հետո Հատուկ գնդի անցած հերոսական ու ուսանելի ճանապարհն է ներկայացնում թանգարանի ավագ գիտաշխատող Մ. Պետրոսյանը՝ հընթացս հրավիրելով ներկաներին դիտելու հոբելյանի առթիվ թանգարանում կազմակերպված ցուցահանդեսը:

Այնուհետեւ գնդի կազմակերպման, անցած մարտական ուղու, առանձին գործողությունների մասին հետաքրքիր հուշեր են պատմում նախկին վաշտերի հրամանատարներ, այժմ պաշտպանության նախարարության համակարգում զանազան պատասխանատու պաշտոններ զբաղեցնող գնդապետներ Ֆ. Գզողյանն ու Գ. Մելքոնյանը, Ս. Պողոսյանը (Քեռի), փոխգնդապետ Ա. Գալստյանը, Հ. Հովհաննիսյանը (Համո), մայոր Գ. Թեփելեքյանն ու մյուսները:

Մինչեւ ուշ երեկո թանգարանի կամարների ներքո չէին դադարում խոսքուզրույցն ու երաժշտությունը:

ԱՍՔԱՆԱԶ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ